

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀՀ-ՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԳՀՄ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017

ՀԳՀՄ Ռազմավարական դիրքորոշումը հրատարակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության աջակցությամբ: Փաստաթղթում արտահայտված կարծիքի համար պատասխանատվությունը կրում է հեղինակը: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը չի կրում որևէ պատասխանատվություն զեկույցի նյութերի, տեղեկատվության կամ արտահայտված կարծիքների ճշգրտության կամ հոսալիության համար: Փաստաթուղթը հրատարակվել է Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից: Ֆինանսավորումը տրամադրվել է ILO-ACT/EMP կողմից: Հրատարակումը չի արտահայտում ԱՄԿ տեսակետները և քաղաքականությունը:

Հարգելի գործընկերներ սույն փաստաթղթի միջոցով Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում մեր կազմակերպության տեսլականը, որն արտահայտում է Հայաստանի Հանրապետությունում գործող գործատուների խնդիրները գործարար միջավայրի նկատմամբ և դրանց կարգավորման առաջարկները: Մեր երկրի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ են կայուն ձեռնարկություններ, իսկ դրա համար անհրաժեշտ են բարենպաստ գործարար միջավայր և հավասար մրցակցային պայմաններ: Միայն այդպիսի միջավայրում կարող են ձեռնարկությունները ավելի լավ զարգանալ և բարգավաճել ստեղծելով կայուն և արժանապատիվ աշխատատեղեր: Բացի այդ բարենպաստ գործարար միջավայրում է հնարավոր նոր ձեռնարկությունների ստեղծումը և դրանց գործունեության երկարաժամկետությունն ապահովելը:

ՀՀ կառավարությունը վերջին մի քանի տարիների ընթացքում և առավելապես ներկայումս ուշադրություն և միջոցներ է տրամադրում գործարար միջավայրի բարելավմանը և չնայած դրան դեռևս առկա են մի շարք խոչընդոտներ, որոնք էականորեն արգելակում կամ դժվարացնում են ձեռնարկությունների կայուն զարգացումը: Հետևաբար, մենք ունենք բավականաչափ չկարգավորված խնդիրներ և դրանց լուծման համար պետք է անցնենք զգալի ճանապարհ:

Հանդիսանալով գործատուների շահերը ներկայացնող կազմակերպություն Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ-ն) վերջին 5 տարիների ընթացքում նրանց կարիքների գնահատման մի քանի վերլուծությունների միջոցով բացահայտել է ամենազխալոր և հրատապ լուծումներ պահանջող խնդիրները, որոնց ամեն օր բախվում են գործատուները և որոնք խանգարում են կայուն զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս փաստաթղթում համառոտ ներկայացված են վերջին ընդարձակ վերլուծության արդյունքները և հայտնաբերված խոչընդոտների կարգավորման առաջարկները:

Այսինքն ներկայացվող փաստաթղթի նպատակն է լայն հանրությանը, գործատուներին և պետական մարմիններին ներկայացնել կառուցողական առաջարկների մի փաթեթ, իրավիճակը բարելավելու համար: Փաթեթը արտահայտում է բազմաթիվ գործատուներին առնչվող առանցքային 7 խնդիրներ, որոնք ներկայումս առկա են գործարար միջավայրում և որոնց բախվում են գործատուները Հայաստանի Հանրապետությունում: Իհարկե սա դեռ բոլորը չէ, և ամբողջական փաթեթը առկա խնդիրների վերաբերվող շատ ավելի մեծ կկազմեր, սակայն մենք նախընտրել ենք ներկայացնել ամենա առաջնահերթ և խնդիրները:

Ներկայումս ՀՀ կառավարությունը իր 5 ամյա ծրագրում (2017 -2022թթ) ընդգրկել է մեր կողմից բացահայտված որոշ խնդիրների լուծումը և գործարար միջավայրի բարելավումը: Հետևաբար, մեր կողմից ներկայացվող մի շարք առաջարկությունները յուրաքանչյուր բացահայտված խնդրի շուրջ էլ ավելի կներդաշնակեցնեն մեր ընդհանուր ջանքերը, ի օգուտ մասնավոր հատված – պետություն երկխոսության և օրենսդրական արդյունավետ փոփոխությունների և վերջին հաշվով գործարար միջավայրի բարեփոխումների: Մենք վստահ ենք, մեր երկրի պետական կառույցների ներկայացուցիչները, գործատուները հատուկ ուշադրության կարժանացնեն ներկայացված հարցադրումները, կգնահատեն և կօգտագործեն սույն փաստաթղթում ներկայացված տեղեկատվությունը, հետագա իրենց աշխատանքներում, ի նպաստ գործարար միջավայրի բարելավման և կայուն ձեռնարկությունների զարգացման: Այս փաստաթղթում ներկայացված առաջարկները և լուծումները անմիջականորեն առնչվում են մեր երկրի աշխատավորներին նույնպես և մենք հուսով ենք, որ նրանք նույնպես կառուցողական կվերաբերվեն բացահայտված խնդիրների, լուծմանը որոնք հանդիսանում են լուրջ արգելք տնտեսության և գործարարության զարգացման համար մեր երկրում կգիտակցեն, որ մենք բոլորս միասին ենք կրում պատասխանատվություն դրանց կարգավորման և գործարար միջավայրի բարելավման հարցերում:

Վերջին հաշվով առանց աշխատավորության աջակցության անհնարին է ապահովել առաջընթաց: Միայն մեր բոլոր շահագրգիռ 3 կողմերի ուժերի համախմբմամբ կհաղթահարենք առկա խոչընդոտները, մշտապես ապահովելով փոխհամաձայնեցվածություն սոցիալական, տնտեսական և քաղաքական որոշումների կայացման գործընթացում:

ՀԳՀՄ նախագահ
Գագիկ Մակարյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին մի քանի տարվա ընթացքում, Հայաստանը բավականին զգալի աշխատանք է կատարել երկրում բիզնես մթնոլորտի բարելավման ուղղությամբ: Համաձայն Համաշխարհային բանկի խմբի, Հայաստանը, վերջին տարիների ընթացքում, ձեռնարկել է լայնածավալ բարեփոխումներ բիզնես միջավայրը բարելավելու նպատակով և հասել է զգալի ձեռքբերումների ներդրումային կլիմայի ասպարեզում: 2015-2016թթ. ընթացքում, Հայաստանը, 189 երկրների շարքում, բարելավել է իր դիրքը (38-ից բարձրացել է 35-րդ հորիզոնական) «*Բիզնեսի վարում*» (*Doing Business*) զեկույցի վարկանիշային աղյուսակում: Իսկ *Համաշխարհային տնտեսական ֆորումի Գլոբալ մրցունակության* աղյուսակում 2010-2011թթ. զբաղեցրած 98-րդ հորիզոնականից (139 երկրից), 2014-2015թթ-ին բարձրացել է 98-րդ հորիզոնական (144 երկրից): Այդուհանդերձ, այս փաստը դեռևս զգալիորեն չի անդադարեցնում ՕՈՒՆ հոսքերի աճի կամ բիզնես գործունեության ընդլայնման վրա: Ձեռներեցության խթանումն ու ՄՓԱՀ-ների աճին նպաստելը շարունակում են մնալ զարգացման հիմնական մարտահրավերների շարքում:

Հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները (ՓԱՀ-ներ) չափազանց կարևոր դերակատարություն ունեն Հայաստանում աղքատության կրճատման և աշխատատեղերի ստեղծման գործում՝ աշխատելու հնարավորություն ընձեռնելով երկրի աշխատուժի մոտ 25 տոկոսի համար: 2012թ-ին ՓԱՀ-ների տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 27 տոկոս: Հայաստանում մի շարք ընթացակարգեր և կանոնակարգեր են ընդունվել՝ ուղղված կայուն աճի ապահովմանը աշխատատեղերի ստեղծման միջոցով, բիզնես միջավայրի զարգացմանը և շրջակա միջավայրի կառավարման բարելավմանը:

2014թ-ին ընդունվեց *Հայաստանի Շարգացման ռազմավարությունը 2014-2025թթ* համար, որն, ի թիվս այլ առաջնահերթությունների, կենտրոնացած է բիզնես միջավայրի և ներդրումային կլիմայի բարելավման և Նորարար ՓԱՀ-ների զարգացման վրա (2015թ-ին ընդունվեց *ՓԱՀ Շարգացման ռազմավարությունը 2016-2018թթ* համար): Ռազմավարությունը հստակորեն սահմանում է, որ պետական շրջանակային քաղաքականությունը զբաղվածության մակարդակի ավելացման ուղղությամբ, ի թիվս այլոց, ուղղված կլինի «բիզնես ձեռնարկությունների ստեղծման և ներդրումների ապահովման հեշտացմանը»: Այն նույնպես անդադարեցնում է ոչ ֆորմալ զբաղվածության խնդիրն, որը կազմում է ընդհանուր զբաղվածության ավելի քան 50 տոկոսը, այնպիսի ոլորտներում, ինչպիսին է գյուղատնտեսությունը: Բացի այդ, 2017-2022 թվականների ժամանակահատվածում երկրի կայուն զարգացումը երաշխավորող Կառավարության գործունեության ծրագիրը, որի տեսլականը հիմնված է անվտանգ, արդար, ազատ և խելացի Հայաստան ունենալու սկզբունքի հիման վրա ընդգծում է, որ Հայաստանում գործարար միջավայրը պետք է ապահովի մրցունակ և հարմարավետ էկոհամակարգ և հավասար խաղի կանոններ: Այն պետք է գրավիչ լինի թե՛ տեղական գործարարների, և թե՛ օտարերկրյա ներդրողների համար: Ծրագրում ընդգրկված են ՀՀ զարգացման առաջնությունները և բարեփոխումները, որոնք վերաբերում են գործարար միջավայրին և կարգավորող դաշտին, մասնավորապես կոռուպցիայի դեմ պայքարին, ոչ ֆորմալ տնտեսությանը և արտահանման խթանմանը:

Նպաստավոր բիզնես միջավայրը՝ գոյություն ունեցող և ապագա ընկերությունների զարգացման, ինչպես նաև ՕՈՒՆ ներգրավման բանալին է: Դրանից ելնելով, կայուն և նպաստավոր բիզնես միջավայրի ստեղծումը չափազանց կարևոր է ամբողջ տնտեսական ոլորտի զարգացման համար: Բարենպաստ միջավայրը ներառում է բիզնեսի բոլոր սեգմենտները (քաղաքական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական): Չնայած Հայաստանն ունի մեծ ներուժ գլոբալ շուկայում ավելի մրցունակ լինելու համար, մեծ թվով բարեփոխումներ և քայլեր են անհրաժեշտ բիզնեսի համար նպաստավոր միջավայր ստեղծելու առումով:

Հայաստանի գործատուների հանրապետական միությունը (ՀԳՀՄ), համաձայն Հայաստանում ձեռնարկությունների համար բարենպաստ միջավայրի զարգացմանը նպաստելու իր մանդատի, խորը և համապարփակ ուսումնասիրության արդյունքում վեր է հանել հետևյալ 7 խոչընդոտները, որոնք ըստ գործատուների համարվում են մոտակա ժամանակահատվածում բարելավման կարիք ունեցող ամենակարևոր հենասյուները՝

1. լավ կառավարումը և արդյունավետ հակակոռուպցիոն գործողությունները;
2. վստահելի և կայուն մակրոտնտեսական քաղաքականությունը և տնտեսության, ներառյալ էներգամատակարարումը, լավ կառավարումը;
3. առևտուրը և կայուն տնտեսական ինտեգրումը;
4. նպաստավոր իրավական և կանոնակարգող միջավայրը;


5. արդար մրցակցությունը;
6. ֆինանսական ծառայությունների մատչելիությունը;
7. կրթությունը, ուսուցումը և ցկյանս ուսումնառությունը:

Մենք հավատում ենք, որ այդ խոչընդոտները խոչընդոտում են երկրին հասնելու իր ռազմավարական գերակայությանը՝ ուղղված երկրում բիզնեսի և ներդրումների կայացմանը և Հայաստանում բարենպաստ գործարար միջավայրի կայացմանը: Մենք նաև հավատում ենք, որ այս փաստաթղթում տեղ գտած առաջարկությունները կծառայեն ապացույցների վրա հիմնված քաղաքականության բարեփոխումներին քաղաքականություն և որոշումներ կայացնողների կողմից կառավարության տարբեր մակարդակներում, որպես գործնական ուղեցույց մասնավոր և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար և, ի վերջո, որպես սոցիալական գործընկերների միջև կոնսենսուսի ձևավորման միջոց, որը խթան կհանդիսանա եռակողմ սոցիալական գործընկերության զարգացմանը:

1. ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սահմանված կարևորագույն խնդիրներից է կառավարման որակը և կոռուպցիայի առկայությունը: Կոռուպցիայի բացակայությունը և արդյունավետ հաստատությունները խթանում են ձեռնարկչությունն ու նպաստում մասնավոր հատվածի աճին ու զարգացմանը: Ինչպես ներկայացված է որոշ նախորդ զեկույցներում, կոռուպցիան կարևոր խնդիր է Հայաստանում: 2016թ. վերջին Հայաստանի կառավարությունը նախաձեռնել է մի շարք հակակոռուպցիոն գործողություններ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ ոչ ֆորմալ տնտեսության և ոչ ֆորմալ զբաղվածության նվազեցման վրա, այդպիսով ստեղծելով դրական բիզնես միջավայր և մրցակցության համար հավասար պայմաններ: Ավելին, Հայաստանի կառավարությունը հայտարարել է միջոցներ ձեռնարկել՝ ուղղված կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակի զարգացմանը և դրա լիարժեք կիրառման ապահովմանը, կառավարության և հասարակայնության հետ կապերի, ինչպես նաև հանրային վերահսկողության ապահովման համար: **Գործունեության նման համալիրը կարող է հանգեցնել ՀՆԱ-ի զգալի աճի: Գործատուների 17.7%-ը կարծում է, որ կաշառակերությունն ու կոռումպացված վճարումների այլ ձևերը հաճախ հետևողականորեն ազդում են երկրում գործող ընկերությունների վրա, ինչը բավականին մտահոգիչ է: Մյուս կողմից, ընկերությունների 33% -ը պնդում է, որ նրանք ստիպված են եղել կատարել «արագ» վճարումներ՝ ծառայության համապատասխան մակարդակ ստանալու դիմաց:**


Պատկեր 1. Արդյո՞ք կաշառակերությունն ու կոռումպացված վճարումների այլ ձևերը հետևողականորեն ազդում են ֆիրմաների գործունեության վրա¹:



Գործատուների կարծիքով, կառավարությունը չի ընդգրկում բոլոր շահագրգիռ կողմերին օրենքների մշակման գործընթացում: Այս իրավիճակը պետք է փոխվի, և բոլոր հետաքրքրված կողմերը, հատկապես սոցիալական գործընկերները, պետք է ներգրավվեն օրենսդրության նախագծման և ընդունման գործընթացում: Ընկերությունների արտադրողականության բարելավման ամենակարևոր խոչընդոտը աշխատուժի ծախսն է: Այս մասին հաղորդում է ընկերությունների 57%-ը:


¹ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկչությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

Պատկեր 2. Արդյո՞ք կաշառակերությունն ու կոռուպացված վճարումների այլ ձևերը հետևողականորեն ազդում են ֆիրմաների գործունեության վրա²:



Ընկերությունների մեծամասնությունը տեղյակ չէ հակակոռուպցիոն արդյունավետ ու անկախ հաստատությունների գոյության մասին, որոնք պատասխանատու են մասնավոր հատվածի կողմից ներկայացվող բողոքների քննման համար: Ընկերությունների միայն 7.7%-ն է տեղյակ այդ հաստատությունների գոյության մասին, մինչդեռ 60%-ն անտեղյակ է: Մյուս կողմից, ընկերությունների 26.3%-ը նշում է, որ անկախ հակակոռուպցիոն հաստատություններ գոյություն չունեն: Այս տվյալները վկայում են երկրում նմանատիպ հաստատությունների ավելի զգալի խթանման և մասնավոր հատվածի միջոցով դրանց ակտիվ ներգրավման անհրաժեշտության մասին:

Պատկեր 3. Արդյո՞ք գնումների ընթացակարգերը թափանցիկ են պետական հայտերի տեղեկային գործընթացներում³:



Ավելին, կազմակերպությունները նշում են նաև պետական գնումների գործընթացում թափանցիկության ապահովման խնդրի առկայության մասին: Ընկերությունների գրեթե 16.7% -ը կարծում է, որ պետական հայտերի մրցույթային (տեղեկային) գործընթացը չի հետևում թափանցիկ գնումների ընթացակարգային կանոններին:

² Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Զայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Զայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

³ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Զայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Զայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է լավ կառավարում և կոռուպցիայի դեմ կոշտ պայքար: Ավելի կոնկրետ մենք կարիք ունենք՝

- ✓ հզոր ինստիտուտների, որոնք ունակ կլինեն արդյունավետ պայքարել կոռուպցիայի դեմ և կաշառակերության հակակոռուպցիոն խորհուրդ բիզնես հատվածի ներգրավմամբ:
- ✓ տեսչական բարեփոխումների, ներառյալ կարողությունների զարգացումը և տեսուչների վերապատրաստումը, բիզնեսի ներգրավմամբ:
- ✓ բազմաթիվ շահագրգիռ կողմերի ներառմամբ անկախ մարմնի ստեղծում, որին կկարողանան հայտնել կոռուպցիոն դեպքերի մասին և այն լիազորված կլինի զբաղվել այդ գործերով հետազայում:

1. Իրազեկում, տեղեկատվություն, կրթություն

- ✓ Բիզնես հասարակության համար ավելի շատ կրթություն և թափանցիկ բիզնես մշակույթի խթանում,
- ✓ Հակակոռուպցիոն միջոցառումների ինտենսիվ խթանում,
- ✓ Բիզնեսի համար տեղեկատվության հասանելիություն և թափանցիկություն:

2. Պետական միջոցների ծախսերի արդյունավետ վերահսկում և մոնիթորինգ

ա) Պետական գնումների համակարգի բարելավում

- ✓ մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն և թափանցիկության բարձրացում,
- ✓ մրցակցության շահագրգռություն,
- ✓ մրցույթների թղթաբանության և պայմանների պարզեցում,
- ✓ հետգնումների մոնիթորինգի համակարգի ստեղծում:

բ) Կարիքների գնահատման հիման վրա պետական ծախսերի օպտիմալացում

- ✓ Նախագնման տեխնիկական գնահատման ընթացակարգի առավել արդյունավետ վերահսկում,
- ✓ բանական պետական ծառայության ռեսուրսներ (աշխատուժ, տեխնիկական սարքավորումներ, ավտոպարկ և այլն) ռացիոնալացում:


3. Արդյունավետ պետական վարչակազմ, ովքեր ունակ կլինեն որակյալ ծառայություններ տրամադրել բիզնեսին:

- ✓ քաղաքացիների և ներդրողների համար որակյալ ծառայությունների մատուցման նպատակով մեկ կանգառի սկզբունքի զարգացում,
- ✓ Էլեկտրոնային ծառայությունների զարգացում,
- ✓ պետական վարչակազմի կառավարման բարելավում՝ ավելի լավ կազմակերպման և պատասխանատվության ավելի բարձր մակարդակի միջոցով,
- ✓ պետական վարչակազմի չափերի օպտիմալացում, հիմնված բիզնեսի իրական կարիքների վրա,
- ✓ պետական ծառայողների համար բազմակողմանի կառավարման համակարգի ներկայացում և վատ աշխատողների փոխարինում ավելի լավ մասնագետներով,
- ✓ պետական ծառայողների համար մշտական վերապատրաստման համակարգի ստեղծում, որպեսզի նրանք նույն ոլորտի ընկերություններում գործնական աշխատանքներ կատարեն:

2. ՆՊԱՍՏԱՎՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԱԿԱՅՐ


Հայաստանը Համաշխարհային բանկի «Doing Business 2017. Հավասար հնարավորություններ բոլորի համար» ամենամյա զեկույցում զբաղեցրել է 38-րդ տեղը 190 երկրների շրջանում⁴: Այնուամենայնիվ, Նորմատիվ դաշտի որակի ինդեքսը, որը չափում է կառավարության կարողությունը ապահովելու հուսալի քաղաքականություն և նորմեր՝ ուղղված մասնավոր հատվածի զարգացման բարելավմանն ու խրախուսմանը, դեռևս բավականին թույլ է և կարգավորիչ միջավայրի որակը համեմատաբար ցածր է: **Այս ցուցանիշի համաձայն, երկրում իրադրությունը գրեթե չի փոխվել 2005թ-ից ի վեր:**

Պատկեր 4. Արդյո՞ք կառավարությունն ապահովում է կանոնակարգող այնպիսի շրջանակ, որը խրախուսում է ընկերություններին ընդլայնելու իրենց գործունեությունը, եթե բիզնես հիմնավորումը թույլ է տալիս:



Հարկային բեռը դիտվում է որպես զգալի ճնշող գործոն 33.7% գործատուների համար, մինչդեռ 9.7%-ը նշում են, որ դա մեծ ճնշում է գործում իրենց գործունեության վրա: Մյուս կողմից, գործատուների 17.7%-ը պնդում է, որ այդ երևույթը որևէ կերպ չի անդադարձել իրենց գործունեության վրա: Գործարարների 28%-ը կարծում է, որ հարկային տեսչությունների գործունեությունը ճնշում է գործադրում իրենց բիզնեսների վրա, 23%-ը հակառակ կարծիքն ունի: 9.7%-ի համար, հարկային վարչարարությունը շատ կարևոր խոչընդոտ է իրենց գործունեության համար: Համաձայն ԱՄՀ-ի, Հայաստանում հարկային համակարգի հիմնական խնդիրներն են՝ հարկային համապատասխանության մեծ արժեքը՝ պատշաճ կարգավորող նորմերի բացակայության հետևանքով, ինչպես նաև ոչ ֆորմալ տնտեսությունը, թույլ կորպորատիվ և եկամտահարկը, և ցածր կախվածությունը ուղղակի հարկերից և գույքահարկից:

Պատկեր 5. Ֆիրմաների կարծիքը հարկային վարչարարության և հարկային բեռի մասին:⁵




⁴ Աղբյուր՝ World Bank. 2017. Doing Business 2017: Equal Opportunity for All

⁵ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

Հարկային բեռի և վարչարարության հետ մեկտեղ, հայկական ընկերությունները կարծում են, որ հարկերի գանձման ընթացքը հեշտացնելու ուղղությամբ մեծ քայլեր են անհրաժեշտ: Նման կարծիք ունի ընկերությունների 59.7%-ը, մինչդեռ միայն 8%-ն է կարծում, որ այդպիսի անհրաժեշտություն չկա:

ՀՀ Կառավարությունը նշում է, որ հարկային և մաքսային համակարգերը պետք է լինեն արդյունավետ և ունենան անհրաժեշտ կարողություններ՝ ստվերային տնտեսության կրճատման և գործարար միջավայրի բարելավման համար: Արդյունավետ հարկային և մաքսային վարչարարության իրականացման արդյունքում պետք է ապահովվի հարկային եկամուտների կայունությունը՝ նախատեսելով հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության աճ՝ առաջիկա 5 տարիների ընթացքում 2.5 տոկոսային կետով՝ հաշվի առնելով առաջիկա տարիներին տնտեսության զարգացման միտումները⁶:

Պատկեր 6. Արդյո՞ք ֆիրմաները ստիպված են գործ ունենալ միանման/համընկնող լիազորություններ ունեցող կանոնակարգող հաստատությունների հետ:⁷



Կարգավորող մարմինների (գործակալություններ, տեսչություններ) լիազորությունների համընկնումը մեկ այլ կարևոր խնդիր է, որը խաթարում է Հայաստանում բիզնես միջավայրը: Վերը բերված դիագրամն արտացոլում է այդ խնդրի աստիճանը, որտեղ կազմակերպությունների 27.3%-ը կարծում է, որ դա որոշակի դեպքերում հանդիպող երևույթ է, իսկ 15.4%-ը նշել է, որ դա մեծամասամբ կամ նույնիսկ մշտապես ի հայտ եկող դեպք է: Ընկերությունների միայն 12.7%-ն է պնդում, որ երբևէ չի առնչվել նման դեպքի հետ:

⁶ Աղբյուր՝ ՀՀ Կառավարության 2017-2022թթ. ծրագիր

⁷ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք կարիք ունենք որակյալ և բիզնես բարեկամական իրավական և կարգավորող դաշտի: Ավելի կոնկրետ մեզ անհրաժեշտ է՝

1. Արդար, կայուն, հակիրճ և բոլորի համար հավասար օրենսդրության ապահովում, որը կնպաստի բիզնես գործունեությանն ու զարգացմանը:

ա) Աշխատանքային օրենսդրությունը պետք է լինի բավականաչափ ճկուն, որպեսզի ապահովի.

- ✓ արդյունավետ և արտադրողական աշխատանք աշխատավայրում, ինչը կընդգծի արդյունավետությունը, որակը և հաճախորդների բավարարվածությունը:
- ✓ վարձատրության մեխանիզմ, որը հիմնված կլինի կատարման և արտադրողականության վրա:
- ✓ ընդունման և ազատման համակարգ, որը հնարավորություն կտա լավագույն աշխատողներին ստանալ լավագույն աշխատանք:
- ✓ աշխատանքային պայմանագրեր, որոնք նպաստում են աշխատանքի ճկուն ձևերին և որոնք հարմարեցվում են ժամանակակից բիզնեսի դինամիկային:
- ✓ արդյունավետ սոցիալական երկխոսության մեխանիզմ, որը ապահովում է բոլոր մակարդակներում (ազգային, տարածքային, ոլորտային) արդյունավետ բանակցություններ աշխատողների և գործատուների միջև:

բ) Հարկային օրենսդրությունը պետք է լինի բարեհունչ բիզնեսին և որևէ խոչընդոտ չպետք է ներկայացնի բիզնեսի զարգացման համար

- ✓ հարկային դրույքաչափերը չպետք է ավելի բարձր լինեն, քան որակյալ ծառայությունների մատուցման արժեքը գործարարներին և հասարակությանը:
- ✓ հարկային ընթակարգերը պետք է լինեն բաց, պարզեցված և հեշտ ընկալելի ու բիզնեսի կողմից իրականանալի, հատկապես պետք է հաշվի առնել ՓՄՁ-ների կարողությունները:
- ✓ հարկային դրույքաչափերի վերաբերյալ տեղեկատվությունն ու ընթացակարգերը պետք է հասանելի լինեն գործատուներին, որպեսզի պահպանվի հարկային օրենսդրության հետ համապատասխանությունը:

2. Կարգավորող մարմինների արդյունավետ աշխատանքը


- ✓ նվազեցնել կարգավորող մարմինների քանակը, որպեսզի նվազեն համընկնումները և պատասխանատվության ներքին կոնֆլիկտները:
- ✓ տեսչությունների աշխատանքի բարելավում՝ հիմնված կանխարգելիչ, այլ ոչ թե ճնշող միջոցառումների վրա, կանխարգելիչ-նախազգուշացնող համակարգ ներդնելու միջոցով, որը պետք է ստուգման բոլոր սուբյեկտների նկատմամբ ապահովվի անկողմնակալ և հավասար վերաբերմունք:

3. ԱՐԴԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Որպես մասնավոր հատվածի և կայուն ձեռնարկությունների զարգացման և աճի նախապայման, կարևոր է ունենալ մրցակցային կանոններ, որոնք, ի թիվս այլոց, ապահովում են հարգանք աշխատանքային և սոցիալական չափանիշների հանդեպ: Բացի այդ, հակամրցակցային գործելակերպը ազգային մակարդակով պետք է վերացվի: Թիրախային խմբերի մասնակիցները չեն կարծում, որ ՓՄՁ-ների զարգացումը հանդիսանում է կառավարության կողմից հռչակված առաջնահերթություն, այլ ավելի հակված են այն մտքին, որ դրանք գտնվում են խոշոր ձեռնարկությունների ստվերում: Բացի այդ, նրանք չեն կարծում, որ կառավարությունն աջակցում է ցանկացած տեսակի գործունեության՝ կապված ապրանքների և ծառայությունների արտահանման հետ: Այդ պատճառով և ելնելով այն փաստից, որ ՓՄՁ-ների գործունեությունը չի խթանվում, նրանք կարծում են, որ գործում են մենաշնորհային միջավայրում՝ անբարեխիղճ մրցակիցներով շրջապատված, որոնք խոչընդոտում են մրցակցության որևէ հնարավորությանը: **Կայուն ձեռնարկությունների համար նպաստավոր միջավայրի ստեղծումը հնարավոր չէ մենաշնորհային գործելաոճի առկայության պայմաններում:**


Ընկերությունների 26,7%-ը նշում է, որ մենաշնորհը կամ մենաշնորհային գործելաոճն առկա է իրենց ոլորտում:

Պատկեր 7. Արդյո՞ք մենաշնորհը կամ մենաշնորհային գործելաոճն առկա է ձեր ոլորտում:⁸



Ընկերությունների 30.5%-ը կարծում է, որ հակամենաշնորհային օրենսդրությունն արդյունավետ չէ, ի հակառակ ընկերությունների 40%-ի, որոնք կարծում են, որ հակամենաշնորհային օրենսդրությունը որոշակի չափով է արդյունավետ:

Պատկեր 8. Որքանով արդյունավետ է եղել հակամենաշնորհային օրենսդրությունը մենաշնորհի ու մենաշնորհային գործելաոճի դեմ պայքարում:⁹



⁸ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

⁹ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է արդար միջակցություն: Առաջարկում ենք կոնկրետ գործողություններ.

Օրենքի գերակայություն, որը բիզնեսի նպատամաբ կապահովի ինչպես հավասար վերաբերմունք, այնպես էլ հարկային բեռի հավասար բաշխում:


- ✓ ոչ ֆորմալ (ոչ պաշտոնական) տնտեսության ձևակերպման քաղաքականության բարելավում հարկային քաղաքականության վերանայման միջոցով, որպեսզի խթանվի ֆորմալացումը:
- ✓ հասարակության բոլոր հատվածներում ոչ ֆորմալ տնտեսության և դրա բացասական ազդեցությունների վերաբերյալ գիտելիքների ավելացում և իրազեկման բարձրացում:
- ✓ ոչ ֆորմալ տնտեսությունը ավելի թանկացնել՝ վերահսկման ուժեղացման և դրանց գործունեության մոնիթորինգի միջոցով, որպեսզի խթանվի դրանց տեղափոխումը ֆորմալ հատված:
- ✓ արդյունավետ միջակցությունը ազատ է մոնոպոլիստական վարքագծից, ինչը տնտեսական գործունեության բոլոր մասնակիցներին հնարավորություն է տալիս ունենալ հավասար հնարավորություններ և ազատ շուկա:
- ✓ հակամենաշնորհային մարմինների աշխատանքի ուժեղացում:
- ✓ բոլոր ոլորտներում, հատկապես առևտրում ընդդեմ մոնոպոլիաների ներկայացնել թիրախային գործողությունների և նոր քաղաքականությունների ներկայացում:

4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության և իր ընկերությունների զարգացման համար առանցքային գործոններից մեկը լավ և մատչելի ֆինանսական ծառայությունների առկայությունն է: Սա հատուկ նշանակություն ունի բոլոր տեսակի ընկերությունների համար՝ անկախ չափից կամ ոլորտից: Ֆինանսական ոլորտը կարևոր է ոչ միայն նոր ընկերությունների խթանման ու խրախուսման համար, այլ նաև՝ աջակցելու գործող ընկերություններին իրենց արտադրությունը և իրենց ապրանքների ու ծառայությունների արտահանումը մեծացնելու տեսանկյունից: Շատ երկրներում, գործող և պոտենցիալ ձեռներեցների համար ֆինանսավորման աղբյուրները հաճախ հանդիսանում են հիմնական խոչընդոտներից մեկը: Լավ ֆինանսական համակարգը ներառում է ոչ միայն մատչելի տոկոսադրույքներ, այլ նաև այլ գործոններ, ինչպես, օրինակ, գրավը և արտոնյալ ժամանակահատվածները, եթե թվարկենք պարզապես մի քանիսը: Ըստ «Doing Business 2017» զեկույցի Հայաստանն ուժեղացրել է վարկերի հասանելիությունը՝ ընդունելով գործարքների ապահովության մասին նոր օրենք, որով հիմնվել է շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների ժամանակակից և կենտրոնացված գրանցամատյան, և բարելավել է իր՝ վարկերի մատուցող տեղեկատվական համակարգը՝ անձնական տվյալների պաշտպանության մասին նոր օրենքի ընդունմամբ¹⁰:

Այնուամենայնիվ, հայկական ՓՄՁ-ները նշում են, որ ֆինանսավորման համապատասխան աղբյուր գտնելը՝ Հայաստանում բիզնես վարելու հիմնական խնդիրն է: Տոկոսադրույքները շատ բարձր են (ավելի քան 15-25%), և չկան մասնագիտացված վարկային գծեր առանձին ոլորտների համար: Գրավի պահանջները մեծ խնդիրներ են առաջացնում գործատուների համար:

Պատկեր 9. Ֆինանսավորման աղբյուրներ¹¹




Հայաստանում ընկերությունների մեծամասնությունն ապավինում է ինքնաֆինանսավորմանը իրենց առօրյա աշխատանքում: Հարցված ընկերությունների 18%-ը գտնում է, որ բոլոր ընկերություններն են ապավինում ինքնաֆինանսավորմանը, և 53%-ը կարծում է, որ ընկերությունների մեծամասնությունն այդպես է վարվում: **Ընդհանուր առմամբ, ընկերությունների 82%-ը գտնում է, որ ինքնաֆինանսավորումը ֆինանսավորման հիմնական աղբյուրն է:** Բացի այդ, շատ ընկերություններ նշում են, որ ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են իրենց սեփական միջոցները և անհատական ներդրողները:

¹⁰ Աղբյուր՝ World Bank. 2017. Doing Business 2017: Equal Opportunity for All

¹¹ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.


«Ֆինանսական ոլորտում կա երկու հիմնական խնդիր՝ բարձր տոկոսադրույքները և գրավի չափը» - մեջբերում մասնակցի կարծիքից:

Պատկեր 10. Որքանով եք համամիտ հետևյալ մտքի հետ՝ «Ֆինանսական ծառայությունների մասին ինֆորմացիան բավականաչափ տարածված է գործարար հատվածի շրջանում»:¹²



Գործատուների մեծ մասը հավատացած է, որ ֆինանսական աղբյուրների վերաբերյալ ինֆորմացիան լավ տարածված չէ՝ նշելով, որ ընկերությունների շրջանում ֆինանսական արտադրանքի վերաբերյալ ինֆորմացիայի պակաս կա:

Պատկեր 11. Արդյո՞ք ֆինանսական արտադրանքը հարմարեցված է տարբեր չափերի ձեռնարկությունների կարիքներին:¹³




Տոկոսադրույքների չափի հետ մեկտեղ, ընկերությունների կողմից վեր հանված խնդիրներից մեկը՝ ֆինանսական արտադրանքի անբավարար աղապատացումն է տարբեր չափի ընկերությունների կարիքներին: **Ընկերությունների 37.7%-ը կարծում է, որ ֆինանսական արտադրանքը հարմարեցված չէ ՓՄՁ-ների կարիքներին, և միայն 4.3%-ը հակառակ կարծիքն ունի:** Ֆինանսական արտադրանքի հետ կապված այլ խնդիր է նաև՝ ֆինանսական հաստատությունների կողմից ՓՄՁ-ներին վարկավորելու քաղաքականության և կարգավորող մեխանիզմների անբավարար մակարդակը:

¹² Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայրի Զայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Զայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

¹³ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայրի Զայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Զայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

Պատկեր 12. Արդյո՞ք գրավի բաժնեմասի ռիսկային սխեմաները հասանելի են ընկերություններին:¹⁴



Ըստ ընկերությունների գրեթե կեսի (40.7%), գրավի բաժնեմասի ռիսկային սխեմաները հասանելի չեն ֆիրմաներին: Միայն 8.7%-ն է կարծում, որ սխեմաները հասանելի են ֆիրմաներին: Մյուս կողմից, ընկերությունների մեծ մասը (56%) համոզված է, որ ձեռնարկությունները կարող են օգտագործել իրենց դրական վարկային պատմությունը որպես «գրավ»՝ ավելի լավ պայմաններով վարկ ստանալու համար և ձգտում են ստանալ առավել մրցակցային պայմաններ տարբեր վարկային հաստատություններից, մինչդեռ ընկերությունների 6%-ը այդպես չի կարծում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է բիզնեսի աջակցող ֆինանսական համակարգ, որը հարմարեցված և նպատակաուղղված կլինի բիզնես կարիքների աջակցմանը, որպես ներդրումների և աճի առանցքային նախապայմաններից մեկը: Ավելի կոնկրետ մեզ անհրաժեշտ է՝

1. Կայուն ֆինանսական համակարգ և բիզնես կարիքների հարմարեցված ֆինանսական ապրանքներ, որոնք ֆինանսների հասանելիության հնարավորություն կտան, որպես ներդրումների, բիզնեսի զարգացման և բիզնեսի աճի առանցքային նախապայման:

ա) Կենտրոնական Բանկի քաղաքականություն ուղղված տոկոսադրույքի նվազմանը

- ✓ ռիսկի կառավարման միջոցառումներ,
- ✓ պարտադիր պահուստների նվազեցում:

բ) ՓՄՁ աջակցության ծրագրի շրջանակներում հատուկ հարթակի ստեղծում, որը կապահովի ՓՄՁ-ների համար ֆինանսական ծառայությունների հասանելիության վերաբերյալ նորացված և կոնկրետ տեղեկատվություն:

գ) ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի ծառայությունների ընդլայնում, որպեսզի հնարավոր լինի ապրանքի կյանքի ցիկլի բոլոր փուլերում աջակցել ՓՄՁ-ներին բանկային վարկի ստացման հարցում:

2. Ավելի շատ աջակցություն բիզնեսին, հատկապես ՓՄՁ-ներին՝ իրենց վարկերի դիմաց գրավի ապահովման գործում:

- ✓ երաշխիքային հիմնադրամի կապիտալի ավելացում,
- ✓ լրացուցիչ վարկային աջակցության և երաշխիքային սխեմաների ստեղծում,
- ✓ հումքի, պատրաստի արտադրանքի կամ շարժական գույքի գրավադրամբ ինստիտուտի զարգացում, արդեն իսկ գոյություն ունեցող ռեգիստրի զարգացում:


¹⁴ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ

Էներգիան և Էներգամատակարարումը մեկ այլ մարտահրավեր է հայկական ընկերությունների համար: Հայկական ընկերությունների առավել քան 80 տոկոսի կարծիքով, Էլեկտրաէներգիայի անջատումները լուրջ խնդիր է մասնավոր հատվածի համար: Ընկերությունների 37.7 տոկոսը հաստատեց, որ Էլեկտրաէներգիայի անջատումները հաճախ վնաս են հասցնում Էլեկտրական սարքավորումներին, ինչպիսիք են, օրինակ, համակարգիչները, ինչը հանգեցնում է նրանց համար հավելյալ զգալի ծախսերի:


Չարգացումները Էներգետիկ ոլորտում դիտվում են որպես Հայաստանում բիզնես վարելու համար հիմնական խոչընդոտներից մեկը, քանի որ երկրում Էներգիայի կայուն մատակարարումը բիզնես ոլորտին հաճախ թերի է: Այս խնդիրը կարևորվեց թե թիրախային խմբի մասնակիցների և թե հարցված ընկերությունների կողմից: Հարցված ընկերությունների 34.7%-ը կարծում է, որ Էներգետիկ ապահովման շուկայում չկան մրցունակ տարբերակներ՝ ի տարբերություն 3.4%-ի, որը կարծում է, որ նման տարբերակներ առկա են:

Պատկեր 13. Արդյո՞ք Էլեկտրաէներգիայի անջատումները կարևոր խնդիր է մասնավոր հատվածի համար:¹⁵



Հարցված ընկերությունների գրեթե 80%-ը կարծում է, որ Էլեկտրաէներգիայի անջատումները կարևոր խնդիր է մասնավոր հատվածի համար (36.3%-ը համարում է այն շատ կարևոր խնդիր, 32.3%-ը՝ կարևոր և 11.3%-ը՝ ինչ-որ չափով կարևոր): Ընդհանուր առմամբ, հարցված ընկերությունների 74.3%-ը կարծում է, որ Էլեկտրամատակարարման դադարեցումներ պատահում են և վնասակար ազդեցություն են ունենում ֆիրմայի գործառնությունների վրա, որից 20%-ը նշում է, որ անջատումները հաճախ են վնաս հասցնում ֆիրմայի աշխատանքին, իսկ 15%-ը պնդում է, որ այդպիսի բան երբևէ տեղի չի ունեցել:

Պատկեր 14. Արդյո՞ք Էլեկտրաէներգիայի անջատումները հաճախ վնաս են հասցնում Էլեկտրական սարքավորումներին, ինչպիսիք են համակարգիչները, ինչի արդյունքում ֆիրմաները զգալի ծախսեր են կրում:¹⁶



¹⁵ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

¹⁶ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

Այս փաստը հաստատվել է նաև հարցման արդյունքներով, որտեղ ձեռնարկությունների 37.7%-ը նշել է, որ Էլեկտրաէներգիայի անջատումները հաճախ վնաս են հասցնում Էլեկտրական սարքավորումներին, ինչպիսիք են համակարգիչները, ինչի արդյունքում ֆիրմաները զգալի ծախսեր են կրում: Ձեռնարկությունների միայն 14%-ն է նշել, որ այդպիսի բան երբեք տեղի չի ունեցել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք կայուն և մատչելի Էներգիայի մատակարարման կարիք ունենք, որը հնարավորություն կտա բիզնեսին գործել աշխատանքի օպտիմալ մակարդակով: Առաջարկում ենք կոնկրետ գործողություններ՝


- ✓ Էներգիայի պարտքի նվազեցում և Էլեկտրաէներգիայի պարտքի հավաքագրման տոկոսադրույքի բարձրացում:
- ✓ Նոր սնուցման կայանների ստեղծման ներդրումների ավելացում ի նպաստ բավարար և կայուն Էլեկտրաէներգիայի թողարկման: Ի լրացումն ինքնաբավության և կայունության, Էներգիայի աղբյուրներում ներդրումները, նաև ապահով ուղղակի ներդրում է ՀՆԱ-ի ապագա աճում:
- ✓ Էլեկտրական ցանցերի բարելավմանն ուղղված ներդրումների ավելացումը կհանգեցնի տեխնիկական և առևտրային կորուստների նվազմանը և կբարելավվի Էներգիայի փոխադրման, բաշխման և մատակարարման որակը:
- ✓ Էներգիայի կորուստների համակարգի ներկայացում:

6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՑԿՅԱՆՍ ՈՒՍՈՒՄՆԱԳՈՒԹՅՈՒՆ

Հմուտ աշխատուժի զարգացումն ու մարդկային կարողությունների ընդլայնումը՝ բարձրորակ կրթական համակարգերի, ուսուցման և ցկյանս ուսումնառության միջոցով, հանդիսանում են կարևոր գործոններ աշխատողների համար՝ լավ աշխատանք, իսկ ձեռնարկությունների համար՝ նրանց անհրաժեշտ հմուտ աշխատողներ գտնելու հարցում: Լավ կրթված և հմուտ աշխատուժը յուրաքանչյուր երկրի հիմնական կարողությունն է: Մյուս կողմից, իրականում, լավ կրթված և որակյալ աշխատուժի պակասը հաճախ հանդիսանում է ամենամեծ մարտահրավերներից մեկը, որի հետ բախվում են երկրները:


Մարդկային ռեսուրսների զարգացումը երկրում ամենամեծ մարտահրավերներից մեկն է: Հայաստանն ունի բնակչության կրթվածության համեմատաբար բարձր մակարդակ, բայց համակարգը չի կարողանում անհրաժեշտ հմտություններով ապահովել ժամանակակից, շուկայական հարաբերությունների վրա հիմնված տնտեսությունը: ՓՄՁ-ները նույնպես հույսը դնում են իրենց «ընկեր-բարեկամների» վրա՝ կադրային կարիքները բավարարելու համար, ինչը կարող է էլ ավելի զսպել աճը:¹⁷

Պատկեր 15. Արդյո՞ք դժվար է, ներկայիս շուկայի պայմաններում, զսպել բարձրակարգ աշխատողների արտահոսքն ընկերությունից¹⁸:



Բացի դրանից, ընկերությունները գտնում են, որ իրենց համար շատ դժվար է, ներկայիս շուկայի պայմաններում, զսպել բարձրակարգ աշխատողների արտահոսքն ընկերություններից: Ընկերությունների միայն 10%-ն է կարծում, որ դա դժվար չէ, մինչդեռ 15.7%-ը հակառակ կարծիքն ունի:

Պատկեր 16. Արդյո՞ք շրջանավարտներն, ընդհանուր առմամբ, տիրապետում են մասնավոր հատվածի ֆիրմաների կողմից պահանջվող գրագիտական և թվաբանական հմտություններին:¹⁹




¹⁷ Աղբյուր՝ «Հայաստանում կանանց ձեռնարկատիրության զարգացման գնահատումը», Հայաստանի գործատուների հանրապետական միություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն 2013թ.

¹⁸ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

¹⁹ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

Ընկերությունների գրեթե 30%-ը կարծում է, որ շրջանավարտները, ընդհանուր առմամբ, չեն տիրապետում այն գրագիտական և թվաբանական գիտելիքներին, որոնք անհրաժեշտ են մասնավոր հատվածի ֆիրմաներին: Միայն 3.3%-ն է կարծում, որ շրջանավարտներն ամբողջությամբ, իսկ 15%-ը՝ որոշ չափով զինված են այդ գիտելիքներով: **Ընկերությունների մեծամասնությունը կարծում է, որ աշխատանքի դիմող միջին շրջանավարտը միայն որոշ չափով է համապատասխանում մասնավոր հատվածի ընկերությունների պահանջներին (47%), և միայն 4.3%-ն է կարծում, որ նա լիովին համապատասխանում է այդ պահանջներին:**

Պատկեր 17. Թեյնիկների ֆինանսավորումը²⁰



Ընկերությունների գրեթե 56.7%-ը չունի թեյնիկների համար պատասխանատու բաժին կամ մասնագետ, մինչդեռ ունի միայն 15.7%-ը: Ինչ վերաբերում է թեյնիկների ֆինանսավորմանը, ընկերությունների 64.3%-ը դրա համար չունի բյուջե, ի հակառակ միայն 7.3%-ի, որն ունի: Ընկերությունների մեծ մասը չի ձեռնարկում կարիքների կանոնավոր վերլուծություն (57%), 13%-ը անց է կացնում, իսկ 5%-ը ծրագրում է դա անել ապագայում: Վերջապես, ընկերությունների կեսը նշեց, որ չկան պետության կողմից ֆինանսավորվող վերապատրաստման դասընթացներ, ի հակառակ 8%-ի, որը նշել է, որ այդպիսի դասընթացներ անց են կացվում: 4%-ը հավատում է, որ այդպիսի թեյնիկներ կանցկացվեն ապագայում:

²⁰ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Դայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Դայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է մրցունակ և հմուտ աշխատուժ՝ հիմնված կրթություն-գործարարություն ուժեղ կապերի վրա՝

1. Մրցունակ և հմուտ աշխատուժն ընդունակ է խնդիրներ լուծել, արտադրողական և նորարարական աշխատանք կատարել, որ ստեղծում է հավելյալ արժեք և՛ իր, և՛ հաճախորդի, և՛ ամբողջ հասարակության համար: Այս ամենի համար առաջարկում ենք կոնկրետ գործողություններ:

- ✓ կրթական հաստատությունների ուսումնական չափորոշիչներում բիզնես հմտությունների բաղադրիչների ներգրավումը և ձեռնարկատիրական կրթության խթանումը, որը հնարավորություն կտա ուսանողներին սկսել իրենց սեփական բիզնեսը, ինչպես նաև ավելի լավ պլանավորել իրենց կարիերայի զարգացումը:
- ✓ ուսումնական ծրագրում տեսության և գործնական բովանդակության միջև ավելի լավ հավասարակշռություն, ինչպես նաև կրթական պրոցեսներում տեխնիկական սարքավորումների և գործիքների արդիականացում նույնպես ձեռնարկատիրական մտածելակերպը խթանելու համար:
- ✓ կրթական հաստատություններում ավելի կատարողական կառավարման համակարգի ներկայացում:
- ✓ ներկայացնել այն միջոցառումները, որոնք թույլ կտան լուծել հմտությունների պակասորդի խնդիրը՝ հետկրթության խթանման միջոցով, աշխատանքի ուսուցման հմտությունների հիման վրա:
- ✓ ներկայացնել այն միջոցառումները, որոնք խթանում են գործատուների կազմակերպությունների մարդկային ռեսուրսների կառավարման վերապատրաստման բարելավմանը:

2. Գործատուների առավել ակտիվ ներգրավում կրթության և վերապատրաստման հետ կապված հարցերում և բիզնեսի ու կրթական հաստատությունների հետ կապի առավել ակտիվացում: Կոնկրետ գործողությունները պետք է ներառեն՝


- ✓ գործատուների առավել ակտիվ մասնակցություն կրթության պլանավորման և ուսումնական ծրագրի կազմման մեջ:
- ✓ գործատուների առավել ակտիվ մասնակցություն կրթական հաստատությունների կառավարման խորհուրդներին:
- ✓ հետազոտությունների և ինովացիայի ոլորտում համալսարան-բիզնես կապի խթանում:
- ✓ գործատուների և նրա ներկայացուցիչների դերի ուժեղացումը քաղաքականության մշակման և կրթական ծրագրերի ստեղծման մեջ, դպրոցների և ԲՈՒՀ-երի աշխատանքում, և դեֆիցիտային մասնագիտությունների խթանման գործում
- ✓ Ոլորտային հանձնաժողովի կարողությունների խթանում, որպեսզի ավելի արդյունավետ դառնան զեկույցների ներկայացման և աշխատաշուկայի տեղեկացի մոնիթորինգը:

7. ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

Առևտրային ինտեգրումը կարող է հանգեցնել դրական տնտեսական ազդեցության, որն, արդյունավետ ձեռքբերումների միջոցով, կարող է դրականորեն ազդել զբաղվածության վրա: Սակայն, քանի որ առևտրային ինտեգրումը կարող է հանգեցնել աշխատանքի տարատեղման, ոչ ֆորմալ զբաղվածության և եկամուտների անհավասարության աճին, ապա առևտրային քաղաքականության ազդեցությունը զբաղվածության և արժանապատիվ աշխատանքի վրա պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվի: Առևտրային տվյալների համաձայն, Հայաստանում տարեցտարի իրավիճակն այս ոլորտում բարելավվում է:


Արտահանմանն ուղղված աճի համատեքստում ՀՀ կառավարությունը նպատակ ունի հասնել ապրանքների և ծառայությունների արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ 40-45% -ով համաձայն 2017-2022 թթ. Գործողությունների ծրագրի²¹:

Պատկեր 18. Ձեր կարծիքով, արդյո՞ք անօրինական վճարումները պետական պաշտոնյաներին անհրաժեշտ են գործի ընթացքն արագացնելու համար:²²



Ընկերությունների 45%-ը կարծում է, որ նրանք ստիպված են եղել տարբեր չափի անօրինական վճարումներ կատարել պետական պաշտոնյաներին, որից 12.3%-ը նշում է, որ այդպես վարվել է հաճախ: 15.7%-ը նշում է, որ երբևէ ստիպված չի եղել այդպես վարվել:

Պատկեր 19. Արդյո՞ք արտահանող ֆիրմաները շահում են պետական խթանիչ նախաձեռնություններից, ինչպիսիք են հարկային արտոնությունները և այլն:²³



Ընկերություններից շատերը (49.7%) տեղյակ չեն պետական խթանիչ նախաձեռնություններից բխող արտոնություններից, ինչպիսիք են, օրինակ՝ արտահանող ընկերությունների համար հարկային արտոնությունները, օրինակ GSP+ արտոնությունների համակարգը: Այն ընկերություններից, որոնք տեղյակ են նման խթանիչ նախաձեռնությունների գոյության մասին, 15.3%-ը


²¹ Աղբյուր՝ ՀՀ Կառավարության 2017-2022թթ. ծրագիր

²² Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

²³ Աղբյուր՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.

կարծում է, որ արտահանող ընկերությունները չեն շահում դրանցից, օրինակ՝ հարկային արտոնություններից; մինչդեռ, միայն 2.7%-ն է կարծում, որ բոլոր արտահանող ընկերությունները շահում են դրանցից: Վիճակը նույնպիսին է՝ կապված առևտրային ֆինանսների մատչելիության և վարկային երաշխիքների հետ: Ընկերությունների մեծամասնությունը տեղյակ չէ դրանց գոյության մասին:

Պատկեր 20. Արդյո՞ք արտահանող ֆիրմաները շահում են պետական խթանիչ նախաձեռնություններից, ինչպիսիք են հարկային արտոնությունները և այլն:²⁴



Ըստ ընկերությունների, միջսահմանային առևտրի ամենամեծ խոչընդոտներից մեկը մաքսային և առևտրային կանոնակարգերն են: Ընկերությունների միայն 10%-ն է կարծում, որ դա ոչ զգալի խոչընդոտ է միջսահմանային առևտրի համար: Մյուս կողմից, 45.6%-ը կարծում է, որ դա նվազ կարևոր կամ շատ կարևոր խանգարող գործոն է: Հայկական ընկերությունների մեծամասնության համար, ուղղակի ներմուծման/արտահանման հետ կապված մաքսային փաստաթղթերի ձևակերպման համար պահանջվող ժամանակը շատ մեծ խնդիր է: Ավելին, **ընկերությունների 46.3%-ը կարծում է, որ պետական պաշտոնյաներն առանց անհրաժեշտության կամ կամայաբար ուշացնում են բեռնափոխադրումները**, մինչդեռ միայն 13%-ն է հակառակ համոզման:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ անհրաժեշտ է՝

- Արտահանման-ներմուծման պրոցեսների կարգավորում՝ արտահանման և ներմուծման համար անհրաժեշտ ժամանակի և փաստաթղթերի նվազեցում**
 - ✓ արդյունավետ և որակյալ էլեկտրոնային համակարգի ներկայացում, մաքսային փաստաթղթերի ստացման համար,
 - ✓ մաքսային աջակցման ինտեգրված համակարգի ներկայացում, որը կբացառի արտահանման և ներմուծման գործընթացներում խախտումները:
- Մաքսային վարչակազմ ունակ աշխատելու արդյունավետ, թափանցիկ և պրոֆեսիոնալ, խիստ հարգելով օրինական գործընթացները:**
- Չարգացնել ճանապարհային և սահմանի հատման ենթակառուցվածքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ և անխափան տեղափոխել ուղևորներ և ապրանքներ:**
- Տեղեկատվության մատչելիություն և արտահանման-ներմուծմանն աջակցող ծառայությունների հասանելիության ապահովում բիզնեսի համար:**
 - ✓ Տեղեկատվություն օտարերկրյա շուկաների մուտքի և հասանելիության համար:
 - ✓ Աջակցող ծառայություններ, որոնք կօգնեն հասկանալ ինչպես մուտք գործել և բիզնես սկսել օտարերկրյա շուկաներում:

²⁴ Արդյունք՝ «Նպաստավոր միջավայր Հայաստանում կայուն ձեռնարկությունների համար» զեկույց, Հայաստանի գործատուների հանրապետական միություն, 2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ք. Երևան 0010,
Խորենացու 26ա
Հեռ.՝ +37410 52 74 21
Էլ. փոստ՝ info@employers.am
Կայք՝ www.employers.am